քափոր Կոսոնենկո (առուս) 1 ր., Այոյան ոմն 60 կ., Ովսանա Ագիտանիկան 40 կ., ընդամենն 340 ր. արժ.։

Մեծ մեծապատուութեանդ խնամարկ ծառայ Յովհաննէս Թամանեան։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՆՈՒՐԲԱՐ-ՓԱՇԱ

—

«Голосъ» լրագրի Կ. Պոլսի թղթակիցը գրում է հետևեալը։

«Բերլինի գաշնագրի 61-որդ յօդուածը, որ վերաբերվում է Հայերով բնակված նահանգների գրութեան բարւոքման և վերանորոգութիւնների, մինչև այժմ անգործադրված է մնացել։ Վերջին ժամանակների ընթացքում անցքերը Հայաստանում, այդ երկրի մէջ տիրող սովը, որ մեծ հարուած է տուել նրա ազգաբնակութեանը, իրանց վրա Լօնդոնի կաբինետի առանձին ուշադրութիւն դարձրին։ Լօնդոնում բնակվում են նշանաւոր թւով հայեր, որոնք հարստացան վաճառականութեան միջոցով և որոնք ընդհանուր յարգանք են վայելում։ Հայերի ներկայացուցիչներից ամենանշանաւորները այս օրերս, ինչպես հաղորդում են, երկար խօսակցութիւն ունեցան Անգլիայի արտաքին գործերի մինիստր լորդ Գրէնվիլի հետ և մինիստրը դրականապէս խոստացաւ նրանց, որ շուտով իր ձեռքը կառնի հայոց գործը և կը կամակերպի Հայաստանում, Անգլիայի օգնութեամբ, նոր քաղաքական կեանք, որով վերջ կը դրվի այն սխալ անկարգութիւններին, որոնք շարունակվում են Թիւրքիայի այդ նահանգի կառավարութեան մէջ, չը նայելով, որ Բերլինի գաշնագրի վաւերացնելուց յետոյ արդէն երկու տարի է անցել։ Ասում են որ Հայաստանում կը մոցնվի Լիբանանի ինքնավարութեան պէս մի ինքնավարութիւն, և կառավարիչ կը նշանակվի մի քրիստոնեայ։ Ինչպէս լսում է, Անգլիայի կանցլերը լինելու է Նուբար-Փաշան։»

ՍՈՎԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

—

Ֆրանսիական «Temps» լրագրին Կ. Պոլսից ապրիլի 29-ից գրում են հետևեալը Հայաստանի մէջ տիրող սովի մասին։

«Վանի անգլիական հիւպատոս գ. Կէլլսոն որ այցելել էր Բեկիրի նահանգը սահմանի վրա, վերադառնալուց յետոյ պատմում էր, որ այդ նահանգի բնակիչները ապրսափելի աղքատութեան մէջ են և ուտում են իրանց ջօրիներին և ձիերին։ Ագրակի նահանգում, որ նոյնպէս սահմանի վրա է գտնվում, հարիւր մարդուց աւելի սովից մեռել են։ Գարդարի մէջ գիւղացիները ծախել են իրանց ջահիլ կանանցը, որպէս զի այդ սոր վաճառքի գնով կարողանան իրանց երեխաների ցոյութիւնը մի քանի օր երկարացնել։ Վանի շրջանակներում ապրանքի սով է տիրում։ Բաշկալէի մէջ բնակիչները ուրիշ կերակուր չունեն բացի տգած արմատների ալիրը։

Վանի մէջ սովատանջներին առաջ հարիւր գրամ հաց բաժին էր տրվում, այժմ այդ թիւը յիսունի է հասցրած։ Մարդիկից, Աղիսի և Մուսուլի վիլայեթներից նոյնպէս վատ տեղեկութիւններ են ստացվում։

Հայերը սկսեցին ստորագրութիւններ հաւաքել։ Նորա գիմեցին Բօսֆէի, Մարմարայի, Կարմուտայի, Եսկայի և Սինգապուրի մէջ բնակվող իրանց ցեղակիցներին։ Մանչեստրի մէջ բնակվող հայ գաղթականները մեծ գումարներ ուղարկեցին։ Հաղորդում են նոյնպէս որ Էջմիածնի Կաթողիկոսի աշխատանքներով հաւաքած հատկաւոր հայ է ստացվում։ Կ. Պոլսի պատրիարքը հրաւիրեց հայ տիկիններին մասնաժողով կազմել և նոր եռանդով զբաղվել բարեգործութեամբ։ Մխիթարեան է այն երեցոյթը, որ այդ մեծ դժբաղդութիւնը ոչնչացրեց կրօնական անհամանդամութիւնները և իրրև մի ընտանիք միացրեց բոլոր հայերին, թէ լուսաւորական, թէ կաթոլիկ և թէ բողոքական։

Սակայն մի գեղեցիկ վիճակ լայանց՝ վերնասված ազգասիրութիւնը երկու տարով տասանորդի տուրքից ազատել։ Կառավարութիւնը յանձնաժողով նշանակեց վնասվածների համար նուիրատուութիւններ հաւաքելու։ Օրերում ասում էին, որ նոր յանձնաժողովը հրաւիրեց հայոց պատրիարքի հիմնած և գործին մեծ ծառայութիւններ տրած հայոց կենտրոնական մասնաժողովը յանձնել իրան հաւաքած գումարները և վերջ դնել իր գոյութեանը։ Այդ լուրը հերքվեցաւ թէ հայոց կոմիտեի կողմից և թէ կառավարութիւնից մի հաղորդութեամբ, որ տպված էր թիւրքայ լրագրերի մէջ։ Հայոց մասնաժողովը, տեղական լրագրերի մէջ տպելով իր հերքումը, մի լաւ լուր է հաղորդում, այն է, որ Բ. Դուռը ընդունեց հայոց պատրիարքի նախագահական առաջարկութիւնները սերմերի բաժանման մասին այն տեղերի մէջ, որտեղ տիրում է սովը։

Մուսաց կառավարութիւնը 10,000 ֆր. ուղարկեց։ Պետերբուրգի հայերը իրանց կողմից նոյնպէս շարժվեցին։ Յօգուտ սովատանջների նրանք կազմեցին երաժշտական երեկոյ, որ մայիսի 3-ին կը տրվի գերմանական դեսպանատանը։ Ծարաբաղդաբար այդ բարեգործութիւնը, համեմատելով դժբաղդութեան մեծութեան հետ, աննշան արդիւնքներ կը տայ։ Այդ պատճառով կարծում են, որ սովատանջ հայերից և մահմեդականներից Աբրմանան Եւրոպային ուղղած խնդիրքը կը լսվիս։

Կ. Պոլսից անգլիական «Standart» լրագրին գրում են հետևեալը։ «Բիթլիսի բնակիչները ապատամբեցին նահանգապետի դէմ, որը հրաման է ստացել բոլոր ազատ հայը Վան ուղարկել։ Բիթլիսը Վանին և Բաշկալային ամենամօտ քաղաքն է։ Երբոյից հաղորդում են, որ եթէ այդ երկու քաղաքները հայ չը ստանան, նրանք բոլորվին կը կորչեն։ Անգլիական և ռուսաց դեսպանները զանգատվեցին Բ. Դրանը Բիթլիսի նահանգապետի վրա, ասելով, որ նա դրել է բնակիչներին ընդդիմանալու համար։ Վերանորոգութիւնների մասնակը յետաձգված է։ Կառավարութիւնը այժմ պատերազմական պատրաստութիւններ է տեսնում, որպէս զի պատրաստ լինի։ Նահանգապետները հրամաններ ստացան, որ բեկիչներին պատրաստ պահեն որպէս զի նրանք կարողանան հրամանի ստանալուց յետոյ խսկոյն զորքի մէջ մտնել։ Անցեալ շաբաթ այսպէս մի քանի հազար զինուորներ հասան։ Ասիայում կառավարական պահեստներում մեծ գործունէութիւն է նշմարվում։»

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Դարբէզ, 30 մարտի

Մարտի վերջումն ենք, բայց տակաւին չազատվեցանք ցրտաչունչ և ըքարեր քամիներից, յորդառատ անձրևներից և ձմեռվան սպառնալիքներից։ Եթէ մի օր ունենում ենք արև և դարման զեղազարդ եղանակ, խսկոյն մէջ է մտնում գիտ մարտը իր բոլոր փոթորիկներով, ամէնքի հանգստութիւնը վրդովում, ամէնքի զուարճութիւնը կիսատ թողնում և ամէնքին յուսակտուր անում, մանաւանդ խեղճ գիւղականին, որ իր եղն ու գոմէշը, արօրն ու մանը կամ և պատրաստ, ուզում է գուբը վարել մշակութեան դաշտը։ Բայց այդ ամսի գժութիւնը շատ վնասակար չէ, դա կ՚ունէ անուշա իր բազմակողմանի և լաւ հետևանքները։ Այդ այդպէս մնելով, վատ չէր լինի, որ ես այստեղ պատմէի մի առանդութիւն։ Ասում են, մի տարի Ղարադաղ գաւառում, մարտը մինչև վերջը այն ասպիճանի ցուրտ և ձիւնալից է լինում, որ մի հայանական գիւղի ժողովուրդ, յուսահատված, իրանց մեկիկով և ծերերով մեռան գնում են գանգատվելու մարտ ամսի ձեռքից իրանց երկրի դատաւոր խանին, խանը լսելով նորանց գանգատը՝ ծիծաղում է իր գիւղացիների յիմար պարզմտութեան վրա և առաջարկում է նորանց մնալ իր տանը որպէս հիւր մինչև երկու շաբաթ, այնուհետև նա մինչև կուենայ նրանց բաղձանքը կատարելու, ինչպէս կը կամենան, որովհետև այդ երկու շաբաթվայ մէջ նա զբաղված կը լինի իր որդու հարսանիքով։ Գիւղացիները լաւ ուրախութիւններ են վայելում խանի տանը այդ միջոցին, մասնակցում են նրա որդու հարսանեաց հանդէսներում, և ապա խանը տալիս է նորանց մի զբաւական հրաման այս բովանդակութեամբ։ «Իմ բարի գիւղացիներ, մինչև որ դուք կը հասնէք ձեր գիւղը, այս հրամանիս զօրութեամբ ալ ես դուք ձիւն և սառնամանիք չէք տեսնի, որովհետև նորանք անմիջապէս կը հեռանան՝ հրամանիս հնազանդելով։» Հասկանալի է, որ խանը օգուտ քաղելով գիւղացիների միամտութիւնից, նորանց ցոյց տուեց իր հրամանը և զօրութիւնը ձմեռվայ վերաբերութեամբ, երբ ապրիլի կէսից յետ գարունն արդէն տարածել էր իր ջերմութիւնը։ Գիւղացիները վերադառնալիս, երբ հասան իրանց գիւղի մօտ եղող ձորակին և երբ տեսան, որ ձիւնը և սառը հալուած գնում են խշխշալով, որպէս փրբրիկ աւուակներ, ուսան դարձան դէպի ձիւնը իրանց գաւառական բարբառով. «Այ սգէտակ յիլոված ձիւն, գեռ հալա խանին գիրն ընք բերած որ իդի լաք տալով իս գնիկիս, որ խանը ինքն իլալ գեսլ յինչ ըս իլալ արիլ։ Այսինքն, այ սպիտակ ալեռած ձիւն, գեռ խանի գիրն ենք բերել, որ այդպէս թաչելով ես գնում, իսկ եթէ խանը ինքն գար, ինչ պէտք է անէիր։

Արտաքսանքում ես հացը օր օրից թանգանում է և անմատչելի դառնում ժողովրդեան ընտոր մասին, որը մի քանի անգամ յեղափոխական ցոյցեր արաւ, բայց կառավարութեան խնամքով հանդարտվեցաւ և վերջապես Շնչ իր ցորենի ըստեմարանները 6 հազար խալվար ցորեն խիստ ամսի գնով ցնորենց Դավրէժի բնակիչներին։ Այդ էլ բաւական չգնեց, որովհետև գեռ չորս ամիս կայ մինչև նոր հունձքը և գիւղերից անհամար բազմութիւն երկրագործների գիմում են դէպի մեր քաղաքը, իրանց ամբողջ ընտանիքներով հաց մուրալու համար, մերկ, սոված և հիւանդոտ։ Ազրակից գիմում են Սալմաստ, իսկ Ուրմիից Թաթվում են Դավրէժ, Ուստ Ղարադաղի հայերը նոյնպէս հաց են պահանջում։ Սովից մահ ես պատահում է մեր կողմերում, մի խօսքով սովը և սատակ ցուրտը այս տարի ամէն տեղ մի սարսափելի տառապանքի տեսարան են ներկայացնում։ Դավրէժի հայերը անտարբեր չեն դէպի մեր վանեցի սովատանջ եղբայրները։ յոյս կայ որ նրանց համար մի գրամական հանգանակութիւն լինի։ Դավրէժի հայերը գրաված են գլխաւորապէս մեր երկրի հայ սովալներով, մինչև օրս մեր քաղաքի հայ չքաւորներին, Մարագի և Ղարադաղի սովատանջներին նպաստած են գրամական օգնութեամբ մօտ 1500 բուրլ։

Այս նամակս, կարծես գիտամբ, մի չարաթ ետ մնաց մինչև ապրիլի 6, որ կարողանամ մի նոր լուր ես պատմել։ Բնութիւնն էլ երբեմն իր հաստատ օրէնքներից չեղվելով, բացառութիւններ է ներկայացնում, ինչպէս պատահեցաւ ներկայ գարնան օրերում։ Մարտի 31-ից օրը փոխվեցաւ, երկինքը սև կուտակ, կուտակ ամպերով ծածկվեցաւ, սառցի բուքը և ցուրտերն սկսեցին յանվար ամսի ասպիճանով, 6 օր չարունակ, այսինքն մինչև ապրիլի 5 ձիւն և անձրև տեղաց անաւոր փոթորիկներով։ Այդ միջոցին բազմաթիւ ոչխարներ և գառներ կոտորվեցան. ասում են որ սատակի և ցուրտը վնասել է նորարարդոյ ծառերին ալ և նոր ծած ցորենին, եթէ որ այս վերջինը կը սըտուգվի, գացող տարվայ համար պէտք է ասել «Ինդ եղիցի լալ և կրծել առատանց»։ Ցեղիս կանանց սեռի մէջ գիտաւորութիւն կայ վանի սովատանջների համար նպաստ հաւաքել։

Արմենակ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Post» լրագիրը անգլիական «Daily News» լրագրի խոսքերին հետևելով, հաղորդում է որ Կ. Պոլսի անգլիական նոր դեսպան Գօլշեի գլխաւոր ջանքերը պէտք է ուղղված լինեն Թիւրքիայի այն երկիրներին ինքնավարական իրաւունքներ տալուն, որոնց մէջ դեռ ես իրագործված չեն որ և է վերանորոգութիւններ։

—Անգլիայի պարլամենտի առաջին նիստերից մէկում միստր Սամուէլսն ասաց, թէ նա դիտաւորութիւն ունի պարլամենտի ուշադրութիւնը դարձնել յունաց և Չէրնոգօրիայի սահմանների խնդրի այժմեան վիճակի, նաև Ասիայի բարեկարգութիւնների խնդրի վրա։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Յայտնի գրող Գուստավ Ֆլոբէր, բէալական չգօլայի գլուխը Ֆրանսիայում, «Madame Bovary և «Salambo» նշանաւոր վիպասանութիւնների հեղինակը, մայիսի 8-ին, ճաչից յետոյ երեք ժամին յանկարծակի մեռաւ կաթուածահարութիւնից իր կալուածքում, Կրուասէում, Բուանի մօտ։ Նա ծնվեց Բուանում 1821 թ.ին։ Նրա հայրը յայտնի բժիշկ էր, և այս պատճառով Գուստավ Ֆլոբէր սկզբում ուսումնասիրում էր բժշկականութիւնը, բայց վերջը սիրահարվեց գրականութեան վրա։ Նրա առաջին հեղինակութիւնն էր «La tentation de Saint-Antoine» որ հրատարակվեցաւ L'Artiste ամսագրի մէջ 1854 թ.ին։ Յետոյ հրատարակվեցան նրա երկու բոմանները, որոնց անունները մենք վերև յիշեցինք, L'Education sentimentale և «Le Candidat» քաղաքական կոմեդիան, որ ներկայացվեցաւ 1874 թ.ին Vaudeville թատրոնում, բայց որը երկար ժամանակ չը կարողացաւ մնալ բեմի թատրոնում։ Երեք տարից առաջ նա կրկին հրատարակեց «Երեք լեգենդներին» («Trois Contes») մի հաւաքածու, որ թարգմանել է ռուսերէն Ի. Ս. Տուրգենեվ։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 մայիսի։ «Правит. Вѣстн.» լրագիրը Կայսրուհու առողջութեան մասին հաղորդում է հետևեալ բիւլետենը։ Վերջին շաբաթվայ ընթացքում Կայսրուհին իրան վատ էր զգում, հիւանդութեան նշանները աւելի խիստ էին, այժմ էլ թուլացել են։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Պ. Ա ՄԻՐԶՕԵԱՆ պատկերահանդէսը բաց է ամէն օր։ Մուտքը յօգուտ ՎԱՆԻ սովատանջների։ Պատկերահանդէսը գտնվում է ՇԻՕԵԱՆ տանը, Գալալիոնի պրոսպէկտի վրա։ Մուտքը 20 կոպէկ է։

1—5

Օրերումս գուբս եկան մամուլի տակից և վաճառվում են Օ. Գ. Ի Գ Ի Գ Ո Ր Ե Ա Ն Ց ի Կովկ. գրաւաճառանոցում։

1. Ը Դ Ա Մ Ա Ն—քերթուածք և թարգմանութիւնք. Տփխիս 1880 թ. գինն է 1 ր. 25 կ.։

2. Դ Ո Կ Տ Օ Ր Լ Ո Կ—Լեսանի առողջապահութեան Տփ., 80 թ. — 35 կ.։

3. Ֆ Ր Է Յ Դ Ա Ն—Տաւիղ յիսնալի Տփ. 80 թ. — 30 կ.։

4. Պ Ա Ր Կ Ա Ս Ա Ն Ց—ընդհանուր պատմութիւն հայոց դպրոցների համար, հ. ա. Տփ. 80 թ. — 80 կ.։

5. Գ Ա Մ Ա Ռ Ա Թ Ի Պ Ա Յ — մանկական երգեր 80 թ. անկազմ — 15 կ.։

6. Կոյնը կազմած — 25 կ.։

7. Սիրլիս Փէլիէրտ Հ՚ոբիմնիացին Ֆրանկիսկէ (Ֆրանչէսկա դա Ռիմինի)։ Դանտէի Նրանչէսկան, Լէսթարդիի առ Իտալիան։ Տաֆերնոյ ծերը։ Ը. Մ. Ե. Գ. Տփ. 80 թ. գինն է — 70 կ.։

10—10

ԿԻՐԱԿԻ, ՄԱՅԻՍԻ 11-ԻՆ Հիսանութեան Թոյլատրութեամբ **ԱԼԷՔՍԱՆԴՐԵԱՆ ՀՅՈՒԹԵԼԻՍ** կենալու է **ՎԻՃԱԿԱԽԱՂ-ԱԼԷԳԻՐ ՅՕԳՈՒՏ ՍՈՎՐՏՍՆՉՆԵՐԻ:**

Տոմսակների խազարկութիւնը կը շարունակի առաւօտեան 10 ժամից մինչև երեկոյեան 8 ժամը:

ՀՅՈՒԹ ՄՏՆԵԼՈՒ տոմսակը 1 ր. արժէ և մանաւանդ ստանում է **ՎԻՃԱԿԱԽԱՂԻ** երկու ՏՈՄՍԱԿ ծրարակը

Այդ մէջ կան՝ զինուորական **ԵՐԵՍԻՏՆԵՐԻ** խումբը:

ՏՈՆՈՂ տոմսակները թւով 700 հարիւր են, իսկ տարբեր առարկաները ՈՍԿԷ, ԱՐԾԱԹԵՂԷ, ԱԳԱԿԵՆԱՁ, և զանազան ՊԱՏԿԵՐՆԵՐ են:

ԵԹԷ ԵՂԱՆԱԿԸ ՎԱՏ ԼԻՆԻ վիճակախաղ-ալէգրի ԿԸ ՅԵՏԱԶԳՎԻ մինչև հեռանալ ԿԻՐԱԿ:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄՈՎՍԻՍԵԱՆ
ԲԻՀԲՈՒԹԵԱՆՑ

Մի Հայոց փողոցում տներ է ծախում, ինդրում է այն անձը, որ նրան երեք նոմակ է ուղարկել քարտէզին փոստով չուղարկել իրան թէ ինչ հասցէով պէտք է ղրկել պատասխանը, որովհետև նոմակները չորագրված չեն և նրանց վրա նշանակված չէ հասցէն:

Յովհաննէս Մ. ԲԻՀԲՈՒԹԵԱՆ

ՎԵՐՋՆԱԿԱՆ ՎԱՃԱՌՈՒՄՆ
(РАСПРОДАЖА)
ՎԵՐՋԻՆ ԵՒ ԱՄԵՆԱՎԱՃԱՌ ԴՆԵՐՈՎ
ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ՊԱՏՐԱՍՏ ՇՈՐԵՐԻ
ԹԻՖԼԻՍՈՒՄ ՄՈՒՐԱՑԼԵԱՆ ԿԱՄՈՒՐՋԻ ՎՐԱ
ՆԱՄԻՐԵԱՆԻ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ

Տրիկոի տանափայ պարտ.	10 ր. —
Ժուլկատի ձեռք շորը	10 ր. —
Գիպիպի	15 ր. —
Սև սերտուկի	25 ր. —
Տրիկոի զոյնաւոր փարտիքը	3 ր. —
Սև փարտիքը	7 ր. —
Որսի ժակետ	8 ր. —
Առաւօտեայ ժակետ	8 ր. —
Երեխայոց տրիկոի զգեստը 2 մինչև	14
տարեկան	3 ր. —
Թալմաներ	12 ր. —
Պարուսիկի զգեստներ	5 ր. —

Նոյն տեղ ծախվում են կանանց և տղամարդկանց շապիկներ, կարասներ, կանանց գոշիներ, նոյնպէս գլուխներ, գոտի մանժէտներ, թաշկինակներ, ձեռնոցներ, պէնիսարներ և ժիլետներ:

9—10

ԵՓՈՐ ԿԱՍՈՒՄՈՎԻ ԵՒ ԸՆԿ.
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԱՆ

ԳԼԽԱՒՈՐ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ

Յայտնում է հասարակութեանը, որ ցանկացողները կարող են առնել 1 և 2 ներքին 5% փոխառութեան տոմսակները յեռամսեայ ժամկետով մի տարուայ ընթացքում և ապրիլի երկու ժամանակաջոցում, նոր և շատ շահաւէտ պայմաններով, որոնց մասին տեղեկանալ կարելի է նոյն իսկ կանաւորի մէջ, որ նոյնպէս առնում է այդ տեսակ տոմսակներ: Գրասենեակը գտնվում է Ալէքսանդրեան այգու հանդէպ, Թումանովի տանը:

8—10

ՄԻ ՀԱՒՆ սէտերի տեսակից, սև գոյնի, սպիտակ բիծով կուրծքի վրա, որձ, «Տիգոր» անունով, կորաւ Ալէքսանդրեան այգուց, ապրիլի 28-ի գիշերը: Գտնողին խնդրում են հասցնել Օտարաքի տան, կոնդիտէր Կելբերի մոտ գտնվող Պօլտարացկու բնակարանը, Ստեփան Ծոերետէլին օրինաւոր վարձատրութեամբ:

3—3

Երկու Ֆրանսիացի ՕՐԻՈՐԴՆԵՐ ցանկանում են ընդունել իրանց մոտ երեխաներին դասեր տալու համար, առաւօտեան ժամի 9-ից մինչև ժամի 1-ը: ԴԱՍԵՐԸ կը լինեն Ֆրանսերէն, գերմաներէն լեզուներից և մաթեմատիկայից:

Հասցէն՝ Սօլոլակի, տուն Օրբելի: № 14.

3—3 (1

ԲԺՇԿԱՆՈՑ

ՀԻՒԱՆԴԱԿՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՒՏԵԱՆ 9-ԻՑ ՄԻՆՉԵՒ 1 ԺԱՄԸ:

Երկոչաբթի. Գաւառական կանանց հիւանդ. Գօրալեվիչ ներքին հ., Բօտիանանց կանանց և երեխաների հ., Քիւչարեանց խրուրգական և աչքերի հ., Ճանմարօրակի վիներական և կաշու հ., Բարաբանց ջղային և հոգեկան հ.:

Երեքշաբթի. Մինկովիչ խրուրգական հ., Վզորով վիներական և բոգազի հ., Բէյլս աչքի հ., Բաթու�մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Կրանոցլեվ ատգով, Լիսիցկի և Վիամիշև ներքին հ.:

Չորեքշաբթի. Լիսիցկի և Բուդկովսկի ներքին հ., Ճանէյմարօրակի վիներական և կաշու հ., Աառուծատուրով կանանց հիւանդութիւնների:

Հինգշաբթի. Վզորով վիներական և բոգազի հ., Բօտիանանց կանանց և երեխաների հ., Լիսիցկի և Վերմիշևի ներքին հ., Քիւչարեանց սիֆիլիսի և սեռական օրգանների հ.:

Ուրբաթ. Գաւառական կանանց հ., Մինկովիչ խրուրգական հ., Կրանոցլեվ ատգով և Լիսիցկի ներքին հ., Բաթուռով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Ճանէյմարօրակի և Աառուծատուրով վիներական և կաշու հ., Բարաբանց ջղային և ներքին հ.:

Շաբաթ Լիսիցկի և Վերմիշևի ներքին հ., Բաթով կուրծքի հ., Եանկովսկի վիներական և կաշու հ.:

Բացի այդ բժիշկ Վզորով բժշկանոցի մէջ ընդունում է անվճար ազգաս հիւանդներին ամենայն օր երեկոյեան 4—6 ժամը:

Բժիշկ Բաթով չորեքշաբթի օրերը առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը ընդունում է իր տանը բժշկանոցի հիւանդներին էլեկտրական բժշկութեան և ներքին հ. համար: Բնակարանը գտնվում է Սերգիևսկայա փողոցի վրա, Բայանդուրովի տանը:

Առտնիարարյ Օրբելյան ազգաս հիւանդներին բժշկանոցի տոմսակով ընդունում է ամենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում ընդունում է մանկարարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի դիրեկտոր Լիսիցկի:

Փետրվարի 12-ից ԹԱՑՎԵՑ իսկան ՍՈՒՄԲԱՏՕՎԻ տանը ԿՕՆԴԻՏԷՐԻ և ՀԱՑԱՐԱՐԻ (пекарня) մագազին «ВАРШАВСКАЯ ПЕКАРНЯ» վերնագրով, որտեղ կը վաճառվին զանազան տեսակ խմորեղէններ, նոյնպէս կը վաճառվին զանազան տեսակ կօնֆէտներ արժան գնով. թէ փոքր և թէ մեծ քանակութեամբ ցանկացողները կարող են ստանալ ԻՄ ՀՈՐԱՐԱՆՆԻՑ: Գտած քաղաքացիք կարող են գալով հետեւալ հասցէով. СОЛОЛАКИ, ВЪ ВАРШАВСКОИ ПЕКАРНИ Мартиросу Ахназарову. Փաստաբերները կը կատարվին ամենայն ճշդութեամբ, գնողներին մեծ զիջումն անելով և փոստի ծախսը մեզ վրա առնելով: Կոնֆիկտների գինը ֆունտը 40 կոպէկից մինչև 1 ր.:

ОСОБА, знающая РУССКІИ, ФРАНЦУЗСКІЙ, НѢМЕЦКІЙ языки и начало МУЗЫКИ желаетъ получать мѣсто ГУВЕРНАНТКИ. Объ адресѣ узнать на ПОЧТОВОЙ СТАНЦІЙ въ ДАМСКОЙ комнатѣ.

Մի տիկին, որ գիտէ ռուսերէն, ֆրանսերէն, գերմաներէն լեզուները և երաժշտութեան սկիզբները, ցանկանում է տնային վարժուհուի տեղ ստանալ: Հասցէն իմանալ ՓՕՍՏԱՅԻՆ ԿԱՅԱՐԱՆՈՒՄ, ԿԱՆԱՆՑ սենեակում:

3—3

1880

ԹԻՖԼԻՍ

ԿԻՐԱԿԻ, ՄԱՅԻՍԻ 11-ԻՆ ՀԱՅ ԹԱՏՐՕՆԱՍԷՐՆԵՐԻ ԽՈՒՄԸ կը ներկայացնէ

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԹԱՏՐՕՆՈՒՄ

ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ

I

ՀԱՃՏԱՐԱՐ ԴԱՏԱՒՈՐԻ ՄՕՏ

Կոմեդիա 3 արար., ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆ Յ. Տէր-Գրիգորեանի

Անցքը պատահում է ԹԻՖԼԻՍՈՒՄ

II

ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ

ՏՕՏՕ

Կ.օղբվիլ 1 արար., Թարգմ. Յ. Տէր-Գրիգորեանի. երրորդ և երրորդ արար. ԱՆՏՐԱԿՏԻ մէջ ս. Փաշայեան-Տէր-Գրիգորեան ԿԵՐԳԻ: Տեղերի գինը սովորական է: Սկիզբն է 8 ժամին:

Տոմսակները թէ ՆԵՐԿԱՅՑՄԱՆ օրը և թէ ՎԱՂՕՐՕՔ կարելի է ստանալ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԹԱՏՐՕՆԻ կասայում, առաւօտեան 10—2 և երեկոյեան 6—8 ժամը:

4—4

ՆԻՈՒ-ԷՕՐՔԻ ԶԻՆԳԵՐ

Ամենամեծ կարելու մեքենայի ընկերութեան աշխարհային համբաւն բաւական բլալով յանձնել իրեն ձեռագործութիւններն կատարելու պարզութեամբը, հաստատութեամբը և այլ՝ երպ աշխատութիւններն կատարելով, տնական և արուեստաւորներու պիտոյից համար, կը համաւոտ գնել համելու մէկիկ մէկիկ իրենց գերազանցութիւնն ուրիշ հնարուած նման առարկայից վրա:

Վերոյիշեալ Նիու Յօրքի Զինկեր ընկերութիւնը այս ապրիլի սկզբներն բացաւ ուրիշ գլխաւոր քաղաքներու պէս, հոս ևս՝ Թիֆլիս շտեմարան մը այլ և այլ կարելու մեքենաներով, Ատամանակի փողոցի, Օրուպարովին տունն, Երևանի հրապարակի մոտ անմիջապէս և կը խնդրուի խաթունայց և պարոնայց ուզող ստանալ այսպիսի մեքենայ գիտել հոն միայն և կը խնդրուի միանգամայն չը խառնակել այս բնիկ նորքաց շտեմարանն ուրիշ վաճառականներու հետ, որոնք միայն Զինկերի սուտ անուամբ նշանակներով և պատկերներով կը խաբեն մեր պաշտպանաւորներն և դժբաղդաբար իրենց մեքենաներով կը տարակուսացուցնեն սեպհական մերոնց լաւութեան անունն:

Ուրիշ քաղաքներու բնակիչք ալ կրնան գիտել մեզ նամակով թէ մեր ընթացիկ գիներուն ցուցակն ուզելու համար, որ կը խրկենք ձրի և թէ որ և է տեղեկութիւն հարցունելու համար, որոնց կը պատասխանենք նմանապէս մի և նոյն լեզուով և կարելի արագութեամբ, մեր երեսագիրն է:

Գ. Նեյմլինգերъ. Тифлисъ.

Գ. Նեյմլինգեր

Գլխաւոր հոդաբարձու ամբողջ Ռուսաստանի և միջին Եւրոպայի:

Խանութի մէջ կարելի է ուզել խանգարված մեքենաները:

3—3 (2)

Дозволено Цензурою 9 Мая 1880 г. Тифлисъ. Տպարան Ա. Ա. Միխելսոնի Типографія А. А. Михельсона